

Կենսաբազմազանության մշտադիտարկման արդյունքները

1. Բուսական աշխարհ

Բուսական աշխարհն ուսումնասիրվել է դաշտային հետազոտությունների արդյունքում: Աշխատանքներն իրականացվել են երկրահետազոտական դասական մեթոդներով՝ երթուղային և կիսաստացիոնար ձևերով: Հետազոտվող տարածքը պայմանականորեն բաժանվել է հիմնական բիոտոպերի՝ հաշվի առնելով ռելիեֆային և լանդշաֆտային առանձնահատկությունները: Յուրաքանչյուր բիոտոպի համար կատարվել է բուսականության նկարագրություն: Դաշտային աշխատանքների ընթացքում գրանցվել և թվայնացվել են հանդիպած բուսատեսակները: Դեպքերում, երբ բույսի որոշումը դաշտային պայմաններում հնարավոր չի եղել, վերցվել են ամբողջական նմուշներ կամ առանձին օրգաններ՝ հետագա լաբորատոր ուսումնասիրության համար:

Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի հարակից տարածքում իրականացվել է անոթավոր բարձրակարգ բույսերի ֆլորայի և բուսականության ուսումնասիրություն՝ ուշադրություն դարձնելով հազվագյուտ և անհետացող տեսակների առկայության կամ բացակայության վրա, ինչպես նաև տեսակների հնարավոր նշանակության (սննդային, դեղագործական, գեղազարդային, տեխնիկական և այլն) վերլուծությանը:

Ըստ ուսումնասիրման արդյունքների՝ Թխկուտ և Այգեձոր գյուղերի շրջակայքի հանքարդյունաբերական տարածքի շրջակայքում որոշվել են բույսերի 89 տեսակ, որոնք պատկանում են բարձրակարգ անոթավոր բույսերի Մերկասերմերի և Ծածկասերմերի բաժիններին պատկանող 78 ցեղի և 37 ընտանիքի (Աղյուսակ 1): Դրանցից 3 տեսակները պատկանում են Փշատերևավորների, 73-ը՝ Երկշաքիլավորների, մնացած 13 տեսակները՝ Միաշաքիլավորների դասերին (Աղյուսակ 1):

Աղյուսակ.1

Խոշոր կարգաբանական միավորները			Ընտանիքների քանակը	Ցեղերի քանակը	Տեսակների քանակը
Թագավորություն	Բաժին	Դաս			
Բույսեր	Մերկասերմեր	Փշատերևավորներ	1	1	3
	Ծածկասերմեր	Երկշաքիլավորներ	33	65	73
		Միաշաքիլավորներ	3	12	13

Ընդամենը	37	78	89
----------	----	----	----

Ֆլորայի ընտանիքների դասավորվածությունը, իր ընդհանուր գծերով, բնորոշ է Իրանաթուրանական գավառի ֆլորային, որտեղ տեսակային բազմազանության առումով առաջատար դիրք են գրավում Հացազգիների (11 տեսակ), Վարդազգիների (11), Բարդաձաղկավորների (8), Լոբազգիների (4), Թելուկազգիների (3), Խաչաձաղկավորների (3), Դժնիկազգիների (3), Կակաչազգիների (3), Իշակաթնուկազգիների (3) և Նոճազգիների ընտանիքները: Ցեղային առումով ևս բազմազանությունը նկատվում է վերը նշված ընտանիքներում:

Աղյուսակ. 2

ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ԲՈՒՅՍԵՐ
ՄԵՐԿԱՍԵՐՄԵՐ
Cupressaceae - Նոճազգիներ
Juniperus foetidissima Willd. - Ցրտնենի, Գիհի գարշահոտ
Juniperus oblonga Bieb. - Գիհի երկարատերև
Juniperus polycarpus K. Koch. - Գիհի բազմապտուղ
ԾԱԾԿԱՍԵՐՄԵՐ
Aceraceae - Թխկազգիներ
Acer campestre L. - Թխկի դաշտային
Acer ibericum Bieb. - Թխկի իբերիական
Alliaceae - Սոխազգիներ
Allium sp. - Սոխ անորոշ
Amaranthaceae - Հավակատարազգիներ
Amaranthus graecizans L. - Հավակատար դիմակավորված
Apiaceae - Հովանոցազգիներ
Astrodaucus orientalis (L.) Drude - Աստղագազար արևելյան
Eryngium campestre L. - Երնջնակ դաշտային
Apocinaceae - Շնմեռուկազգիներ
Vinca herbacea W. K. - Կուսածաղիկ խոտային
Asparagaceae - Ծնեփակազգիներ
Asparagus persicus Baker - Ձնեբեկ, Ծնեփակ պարսկական
Asteraceae - Բարդաձաղկավորներ
Aster sp. - Աստղաձաղիկ անորոշ
Carthamus turkestanicus M. Pop. - Գաթի ծաղիկ, Կանճրակ թուրքեստանյան
Chondrilla juncea L. - Ծամանիկ, Խիժաճարճատուկ կնյունանման
Cichorium intybus L. - Եղերդակ, Ճարճատուկ սովորական
Cirsium arvense (L.) Scop. - Գեղավեր, Տատասկ դաշտային
Conyza canadensis (L.) Cronq. - Կոնիզա կանադական

Lactuca serriola L. - Մառոլ, Հազար, Կաթնուկ կողմնացույց
Xeranthemum squarrosum Boiss. - Չորաբույս, Անմեռուկ չոլած
Brassicaceae - Խաչածաղկավորներ
Alyssum desertorum L. - Վառվռուկ անապատային
Crambe orientalis L. - Ծովակաղամբ արևելյան
Fibigia clypeata (L.) Medic. - Ֆիբիգիա վահանանման
Caprifoliaceae - Ցախակեռասազգիներ
Lonicera iberica Bieb. - Ցախակեռաս վրացական
Caryophyllaceae - Մեխակազգիներ
Acanthophyllum mucronatum C.A. Mey. - Փծատերև սրածայր
Silene italica (L.) Pers. - Ծվծվուկ իտալական
Chenopodiaceae - Թելուկազգիներ
Atriplex turcomanica F. et M. - Թալ թուրքմենական
Chenopodium album L. - Թելուկ սպիտակ /կամ սովորական/
Chenopodium botrys L. - Թելուկ հոտավետ
Convolvulaceae - Պատատուկազգիներ
Convolvulus arvensis L. - Պատատուկ դաշտային
Cornaceae - Հոնազգիներ
Swida australis (C.A. Mey.) Pojark. ex Grossh. - Ճապկի հարավի
Cucurbitaceae - Դմազգիներ
Melo sativus Sager. ex Roem. - Սեխ սովորական
Cuscutaceae - Գաղձազգիներ
Cuscuta cesattiana Bertol. - Գայլխոտ, Գաղձ Ցեզատի
Dipsacaceae - Ակքանազգիներ
Scabiosa persica Boiss. - Քոսքսուկ պարսկական
Euphorbiaceae - Իշակաթնուկազգիներ
Chrozophora tinctoria (L.) Adr. Juss. - Խամբար, Խրոզոֆորա ներկակիր
Euphorbia helioscopia L. - Իշակաթնուկ արևատես
Euphorbia sequierana Neck. - Իշակաթնուկ Սեգիերի
Fabaceae - Լոբազգիներ
Astracantha microcephalus Willd. - Գազ մանրագլխիկ
Astragalus sp. - Գազ անորոշ
Medicago sativa L. - Աովույտ ցանովի
Melilotus officinalis (L.) Pall. - Իշառուկույտ դեղատու
Fagaceae - Հաճարազգիներ
Quercus araxina (Trautv.) Grossh. - Կաղնի արաքսյան
Hypericaceae - Սրոհունդազգիներ
Hypericum perforatum L. - Սրոհունդ խոցված
Hypericum scabrum L. - Սրոհունդ անհարթ
Juglandaceae - Ընկուղազգիներ
Juglans regia L. - Ընկուղենի սովորական
Lamiaceae - Շրթնածաղկավորներ

Origanum vulgare L. - Խնկածաղիկ սովորական
Salvia sp. - Եղեսպակ անորոշ
Teucrium polium L. - Լերդախոտ ալեհեր
Loranthaceae - Փոկածաղկազգիներ
Viscum album L. - Մղամուճ սպիտակ
Oleaceae - Ձիթենազգիներ
Fraxinus excelsior L. - Հացենի սովորական
Jasminum fruticans L. - Հասմիկ թփուտային
Papaveraceae - Կակաչազգիներ
Glaucium grandiflorum Boiss. et Huet. - Թխակակաչ խոշորածաղիկ
Papaver commutatum Fisch. et C.A. Mey. - Կակաչ խճճված
Papaver fugax Poir. - Կակաչ թոչող
Plantaginaceae - Ջղախոտազգիներ
Plantago lanceolata L. - Ջղախոտ, Եզան լեզու նշտարատերև
Poaceae - Հացազգիներ
Aegilops cylindrica Host - Այծակն գլանաձև
Aegilops tauschii Coss. - Այծակն Թաուշի
Avena fatua L. - Խրբուկ, Վարսակ դատարկ, Վ. պոչուկ
Bromus japonicus Thunb. - Ցորնուկ ճապոնական
Cynodon dactylon (L.) Pers. - Շնատակ, Արվանտակ մատնածև, Բերմուդյան խոտ
Dactylis glomerata L. - Ոգնախոտ հավաքված
Elytrigia repens (L.) Nevski - Չաիր, Սեզ սողացող
Hordeum bulbosum L. - Գարի սոխուկավոր
Poa bulbosa L. - Արոտածիլ, Հուրանախոտ, Դաշտավլուկ սոխուկավոր
Setaria viridis (L.) P. Beauv. - Խոզանախոտ, Խոզանուկ կանաչ
Taeniatherum crinitum (Schreb.) Nevski - Երիզախոտ, Երիզաքիստ երկարամազ
Polygonaceae - Մատիտեղազգիներ
Polygonum aviculare L. - Մատիտեղ ճնճուկի
Rumex crispus L. - Ավելուկ գանգուր
Ranunculaceae - Գորտնուկազգիներ
Thalictrum minus L. - Քնձմնձուկ փոքր
Resedaceae - Հափուկազգիներ
Reseda lutea L. - Հափուկ դեղին
Rhamnaceae - Դժնիկազգիներ
Paliurus spina-christ (Mill) A.C. Sch. - Ժանտափուշ, Ցաքի փշոտ
Rhamnus cathartica L. - Դժնիկ լուծողական
Rhamnus pallasii Fisch. et C.A. Mey. - Դժնիկ քաղցր
Rosaceae - Վարդազգիներ
Agrimonia eupatoria L. - Երեսնակ սովորական
Amygdalus fenziana (Fritsch) Lipsky - Նշենի Ֆենցլի
Cerasus mahaleb (L.) Mill. - Բալենի մահալեբի

<i>Cerasus microcarpa</i> (C. A. Mey.) Boiss. - Կեռասենի մանրապտուղ
<i>Crataegus orientalis</i> Pall. ex Bieb. - Ալոճ, Սզնի արևելյան
<i>Prunus divaricata</i> Ldb. - Սալոր, Շլոր
<i>Pyrus salicifolia</i> Pall. - Տանձենի ուտենատերև
<i>Rosa canina</i> L. - Մասրենի շան
<i>Rosa iberica</i> Stev. ex Bieb. - Մասրենի վրացական
<i>Rubus armeniacus</i> Focke. - Մոշենի հայկական
<i>Spiraea hypericifolia</i> L. - Ասպիրակ արևքուրիկատերև
Scrophulariaceae - Խլածաղկազգիներ
<i>Bungea trifida</i> (Vahl) C. A. Mey. - Բունգեա եռաբաժան
Solanaceae - Մորմազգիներ
<i>Capsicum annuum</i> L. - Բիբար, ծիծակ, Բուլղարական
Ulmaceae - Թեղազգիներ
<i>Celtis caucasica</i> Willd. - Փռչնի կովկասյան
<i>Ulmus minor</i> Mill. - Թեղի փոքր
Urticaceae - Եղինջազգիներ
<i>Urtica dioica</i> L. - Եղինջ երկտուն

Ուսումնասիրվող տարածքի ֆլորայի կազմում բույսերի տարբեր կենսաձևերը ներկայացված են հետևյալ հարաբերակցությամբ՝

- Ծառեր – 14 տեսակ (ֆլորայի 15.8%-ը) Թփեր- 14 տեսակ (ֆլորայի 15.8 %-ը),
- Թփիկներ, կիսաթփեր և կիսաթփիկներ - 4 տեսակ (ֆլորայի 4.5 %-ը), Բազմամյա լիանանման կիսաթուփ – 1 տեսակ (ֆլորայի 0.9 %-ը), Բազմամյա խոտաբույսեր – 29 տեսակ (ֆլորայի 32.6 %-ը),
- Մեկ-երկամյա և երկամյա խոտաբույսեր – 7 տեսակ (ֆլորայի 7.9 %-ը), Միամյաներ – 20 տեսակ (ֆլորայի 22.5 %-ը):

Բազմամյա և միամյա խոտաբույսերը հետազոտվող տարածքում արտահայտված են գրեթե հավասարաչափ և հանդիպում են բուսականության բոլոր տիպերում: Թփերը և թփիկները հիմնականում տարածված են նոսր ձևով և նախընտրում են համեմատաբար խոնավ ապրելավայրերը: Ծառերը տեղակայված են հիմնականում տարածքի արևմտյան և հարավ-արևելյան կողմերում, որտեղ կազմում են նոսրանտառային հատումներ:

Տարածքի մեծ մասը ներկայումս զուրկ է բուսականությունից, իսկ մնացած հատվածները պատված են մոլախոտային բուսականությամբ: Եզրային հատվածներն ընդգրկված են տափաստանային, թփուտային և անտառային բնական բուսականությամբ (նկ. 1.2) :

Բուսականության բնական տեսքը հիմնականում տիպական է տափաստանային և նոսրանտառային կազմավորման համար: Բուսաաշխարհագրական առումով

տարածքը պատկանում է Մեղրու ֆլորիստիկ շրջանին, որը, իր հերթին, ընդգրկված է Հին Միջերկրածովյան ֆլորիստիկ ենթաթագավորության Իրանաթուրանական գավառի Արմենաիրանական ենթագավառում:

Հետազոտվող տարածքի բուսականությունն արտահայտված քսերոֆիլ բնույթ է դրսևորում, առավելապես տափաստանային և նոսրանտառային բուսականության տիպերում: Բնափայտավոր տեսակները ներկայացված են արաքսյան կաղնու, թխկու, կեռասենու, թեղու, գիհու, ցաքու, վրացական ցախակեռասի և այլ ծառերով ու թփերով (Նկ. 2,3,4):


Ծառային տեսակները կազմում են ուսումնասիրության ընթացքում հայտնաբերված բուսատեսակների 15,8 %-ը (14 տեսակ): Թփային տեսակները նույնպես կազմում են 15,8 %-ը (14 տեսակ) և հիմնականում հանդիպում են տարածքի եզրային հատվածներում:



Նկ. 1



Նկ. 2



Նկ.3



Նկ. 4

Հետազոտվող տարածքի հիմնական բուսածածկը ներկայացված է բազմամյա, երկամյա, երկամյա-միամյա և միամյա խոտաբույսերով: Տափաստանային խոտաբույսերը հիմնականում հանդիպում են կենտրոնական և ստորին հատվածներում, սակայն առկա են նաև արաքսյան կաղնու անտառակներում և ցաքու թփուտներում ավելի քիչ քանակով:

Տարածքի բուսականությունը հարուստ է տարբեր օգտակար հատկություններով տեսակներով, որոնք ընդգրկում են դեղատու, սննդային, համեմունքային, կերային, գեղազարդային, տեխնիկական և մեղրատու խմբեր: Սակայն ուսումնասիրությունների ընթացքում չեն հայտնաբերվել Հայաստանի Կարմիր գրքում գրանցված, ինչպես նաև էնդեմիկ բուսատեսակներ:

Ուսումնասիրված տարածքում գերակշռում են նոսրանտառները, որոնք հիմնականում զարգացած են արևմտյան և հարավ-արևելյան հատվածներում: Բուսականությունը առավելապես ներկայացված է համեմատաբար խոնավ ապրելավայրերում: Տարածքի ֆլորան ներառում է բազմաթիվ օգտակար և տնտեսական նշանակություն ունեցող տեսակներ, որոնք ըստ օգտագործման ոլորտների կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

Դեղատու բույսեր

Տարածքում լայնորեն տարածված են բժշկության և ժողովրդական բուժական պրակտիկայում կիրառվող տեսակներ՝

- **Սրոհունդ խոցվածը** (*Hypericum perforatum*)
- **Պատատուկ դաշտայինը** (*Convolvulus arvensis*)
- **Լերդախոտ ալեհերը** (*Teucrium polium*)
- **Եզան լեզու նշտարատերևը** (*Plantago lanceolata*)
- **Մատիտեղ ճնճղուկին** (*Polygonum aviculare*)
- **Դժնիկ լուծողականը** (*Rhamnus cathartica*)
- **Սզնի արևելյանը** (*Crataegus orientalis*) և այլք:

Սննդային և համեմունքային բույսեր

Տարածքում աճում են ինչպես սննդային, այնպես էլ համեմունքային նշանակության տեսակներ՝

- **Ճարճատուկ սովորականը** (*Cichorium intybus*)
- **Կաթնուկ կողմնացույցը** (*Lactuca serriola*)
- **Եղինջ երկտունը** (*Urtica dioica*)
- **Շլորենին** (*Prunus divaricata*)
- **Մոշենի հայկականը** (*Rubus armeniacus*)
- **Թելուկ սովորականը** (*Chenopodium album*)
- **Ավելուկ գանգուրը** (*Rumex crispus*) և այլն:

Կերային բույսեր

Տարածքը հարուստ է նաև արժեքավոր կերային բույսերով, որոնք կարևոր նշանակություն ունեն անասնապահության համար՝

- **Առվույտ ցանովին** (*Medicago sativa*)

- **Իշառվույտ դեղատուն** (*Melilotus officinalis*)
- **Վարսակ դատարկը** (*Avena fatua*)
- **Դաշտավլուկ սոխուկավորը** (*Poa bulbosa*)
- **Ցորնուկ ճապոնականը** (*Bromus japonicus*) և այլն:

Գեղազարդային բույսեր

Էսթետիկ և լանդշաֆտային արժեք ունեցող տեսակներն էլ ներկայացված են բավականին հարուստ՝

- **Գիհի գարշահոտը** (*Juniperus foetidissima*)
- **Խնկածաղիկ սովորականը** (*Origanum vulgare*)
- **Բալենի մահալեբին** (*Cerasus mahaleb*)
- **Փռչնի կովկասյանը** (*Celtis caucasica*) և այլն:

Տեխնիկական բույսեր

Տարածքում հանդիպում են նաև տեխնիկական նշանակություն ունեցող տեսակներ, որոնք կիրառվում են որպես վառելանյութ, ներկատու, եթերայուղատու կամ խեժատու բույսեր.

- **Շլորենին** (*Prunus divaricata*)
- **Հացենի սովորականը** (*Fraxinus excelsior*)
- **Կաղնի արաքսյանը** (*Quercus araxina*)
- **Եղինջ երկտունը** (*Urtica dioica*) և այլն:

Մեղրատու բույսեր

Տարածքում առկա են մեղվաբուծության համար արժեքավոր տեսակներ՝

- **Թխկի իբերիականը** (*Acer ibericum*)
- **Իշառվույտ դեղատուն** (*Melilotus officinalis*)
- **Աստղագազար արևելյանը** (*Astrodaucus orientalis*)
- **Ճարճատուկ սովորականը** (*Cichorium intybus*) և այլն:

Ուսումնասիրված տարածքում Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, ինչպես նաև չեն հայտնաբերվել ՀՀ և այլ կարգավիճակի էնդեմիկ տեսակներ:

